Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-518[1]-21.02.2023-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԱՌԱՔՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-171-Ն օրենքի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 7. Հատուկ առաքման սակագինը**

1. Հատուկ առաքման սակագնի ձևավորման հիմքում ընկած է ծախսածածկման սկզբունքը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-518[1]-21.02.2023-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԱՌԱՔՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-171-Ն օրենքի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 7. Հատուկ առաքման սակագինը**

1. ~~Փաստաթղթերի հ~~Հատուկ առաքման սակագնի ձևավորման հիմքում ընկած է ծախսածածկման սկզբունքը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-518-21.02.2023-ՏՀ-011/1) ԵՎ «ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԱՌԱՔՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-518[1]-21.02.2023-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի ամբողջ տեքստում**	Առաջարկում ենք ամբողջ Նախագծում «փոստային ծառայություն» ձևակերպումը փոխարինել «փոստային կապի ծառայություն» ձևակերպմամբ՝ Նախագծի մի շարք հոդվածներում միեւնույն միտքն նույն բառերով արտահայտելու համար:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրված 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում նշված «Օրենքի» բառը փոխարինել «սույն օրենքի» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրված 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում «անձնագիր» բառը փոխարինել «անձը հաստատող փաստաթղթի» ձևակերպմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «անձը հաստատող փաստաթուղթ» ձևակերպումն ավելի ընդարձակ է և իր	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			մեջ կլանում է նաև նույնականացման քարտը, զինվորական գրքույկը՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց համար, Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը կամ ժամանակավոր վկայականը, մինչեւ 16 տարեկան երեխաների համար՝ անձնագիրը, ծննդյան վկայականը, ինչպես նաեւ փախստական ճանաչված, ինչպես նաեւ քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձանց համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը. ապաստան հայցողի համար՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայականը:		
4.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրված 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում «ուղիղ փոստը» բառերը փոխարինել «ուղիղ փոստային առաքանին» ձևակերպմամբ, քանի որ հիշյալ կետում խոսք է գնում հենց ուղիղ փոստային առաքանու մասին:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
5.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրված 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում «Առաքանու ներդրվածքը» ձեւակերպումը փոխարինել «Ուղիղ փոստային առաքանու» բառերով, քանի որ նշված դրույթը վերաբերում է ուղիղ փոստային առաքանուն:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

6.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրված 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում «փոստային գործունեության տեսակ» ձեւակերպումը փոխարինել փոստային կապի գործունեության տեսակ» ձևակերպմամբ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
7.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրված 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետում հիշատակվող օրենքի վերնագրից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
8.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրված 3-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետից հանել երկրորդ նախադասությունը, քանի որ Քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածով արդեն իսկ հստակ սահմանված է լիազորագրի հիման վրա հասցեատիրոջ անունից վերջինիս առաքանին ստանալու հարաբերությունները, ինչպես նաև նշված է լիազորագիրը հաստատելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
9.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրված 3-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով նախատեսված «կանոնակարգ»	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հասկացության սահմանումից հանել «ինչպես նաև փոստային կապի օպերատորի գործունեության և սուրհանդակային կապի օպերատորի գործունեության կանոնակարգերով սահմանված պահանջներ.» ձևակերպումը՝ հստակեցնելով հասկացության բովանդակությունը:		
10.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրված 3-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետում «փոստային օպերատոր» ձեւակերպումը փոխարինել «փոստային կապի օպերատոր» ձեւակերպմամբ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
11.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրված 3-րդ հոդվածի 1-ին մասի 48-րդ կետում և Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 6.2-րդ հոդվածում «փոստային գաղտնիություն» ձևակերպումը փոխարինել «փոստային կապի գաղտնիություն» ձեւակերպմամբ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
12.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 1-ին, 2-րդ, 9-րդ հոդվածներ**	Առաջարկում ենք Նախագծում պահպանել դասական թվականների գրության ձեւը՝ Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրված 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «3.3» ձևակերպումը փոխարինելով «3.3-րդ» ձևակերպմամբ, Նախագծի 2-րդ հոդվածում կիրառված «3.1» ձեւակերպումը փոխարինելելով «3.1-ին» ձևակերպմամբ, Նախագծի 9-րդ հոդվածում նշված «181-րդ» ձեւակերպումը փոխարինելով «181 -ին» ձեւակերպմամբ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

13.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 3-րդ հոդված**	Առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 3.2-րդ եւ 3.3-րդ հոդվածների վերնագրում հոդվածների համարները հոդվածների վերնագրերից բաժանել միջակետերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված պահանջը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
14.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 10-րդ հոդված**	Առաջարկում ենք Նախագծի 10-րդ հոդվածով Օրենքի 18^2-րդ հոդվածում լրացվող 10-րդ մասում «ծառայությունների» բառից հետո լրացնել «մատուցման» բառը՝ հիմք ընդունելով Օրենքի 18^1-ին եւ 18^2-րդ հոդվածներում կիրառվող հասկացությունները:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
15.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 11-րդ հոդված**	Առաջարկում ենք Նախագծի 11-րդ հոդվածի վերնագիրն հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
16.	**ՀՀ կառավարություն**	«Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի **նախագծի 1-ին հոդված**	Առաջարկում ենք «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրված 7-րդ հոդվածում «Փաստաթղթերի հատուկ» բառերը փոխարինել «Հատուկ» բառով, քանի որ նշված օրենքում «փաստաթղթի հատուկ առաքում» եզրույթի փոխարեն կիրառվում է վերջինիս կրճատ տարբերակը, այն է՝ «հատուկ առաքում» ձևակերպումը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: